ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՇԵՆԳԱՎԻԹ ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔ

ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ-43

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ /վարչական շենքի/ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 1079

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ.
ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՏԱՍՆՉՈՐՍ ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ ՔՍԱՆՄԵԿԻՆ:

«ՎԱՐՁԱՏՈՒ» **ԱՆՆԱ ՍՏԵՓԱՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ,**
ծնված 06.08.1968թ.,
անձնագիր AE0595210, տրված՝ 19.09.2000թ., 003-ի կողմից,
վավերականության ժամկետը երկարաձգված է մինչև՝ 19.09.2015թ.,
հաշվառված՝ ք. Երևան, Բագրատունյաց փող., 16 շենք, 73 բնակ.,

«ՎԱՐՁԱԿԱԼ» <<ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկը,
Իրավաբանական հասցեն՝ ք. Երևան, Խորենացի թիվ 3 հասցեում,
որի անունից , համաձայն աշխատակազմի ղեկավար՝ Ա. Գևորգյանի կողմից 21.02.2014թ. տրված թիվ 2079/18 լիազորագրի, գործում է՝
ՎԱՆԻԿ ՎԱԼՈՂՅԱՅԻ ՄԿՐՏՉՅԱՆԸ,
ծնված 04.01.1962թ.,
անձնագիր AE0657524, տրված՝ 06.10.2000թ., 013-ի կողմից,
վավերականության ժամկետը երկարաձգված է մինչև՝ 06.10.2015թ.,
հաշվառված ք. Երևան, Դավիթաշեն 2 թ/մ, 9-17,
ԿՆՔԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՄԱՍԻՆ:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1.Սույն պայմանագրով ՎԱՐՁԱՏՈՒՆ պարտավորվում է վճարի դիմաց ՎԱՐՁԱԿԱԼԻ ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել 1.2 կետում նշված գույքը:

1.2. Վարձատուն պարտավորվում է Վարձակալին հանձնել հետևյալ գույքը՝ ***Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Կենտրոն համայնքի Խորենացի փողոցի 7/տոթ/ ա շենքի թիվ 4/չորս/ հասցեում գտնվող անշարժ գույքը՝ տարածքը*** /, որը բաղկացած է՝

- հասարակական սեփականություն՝ 87,85քմ/ութսունյոթ ամբողջ ութսունհինգ/,
- բնակավայրերի ընդհանուր բաժնային սեփականություն՝ 0,03651հա/զրո ամբողջ զրո երեք հազար վեց հարյուր հիսունմեկ/ ,հողամասի ծածկագիրը՝ 01-006-0523-0123, շինության ծածկագիրը՝ 01-006-0523-0123-001-003/, այսուհետ՝ <<ԳՈՒՅՔ>>:

1.3. Գույքը պատկանում է վարձատուին սեփականության իրավունքով, ինչը հաստատվում է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի <<Կենտրոն>> տարածքային ստորաբաժանման կողմից տրված 10.11.2006թ. թիվ 2236682 սեփականության իրավունքի վկայականով:

1.4. Սույն պայմանագրի գործողության ընթացքում Գույքի օգտագործման արդյունքում վարձակալի ստացած եկամուտները նրա սեփականությունն են:

1.5. Սույն պայմանագրի 1.2. կետում նշված Գույքը վաճառված, վարձակալության կամ անհատույց օգտագործման տրված կամ այլ կերպ ծանրաբեռնված չէ, դատական վեճի առարկա չէ, *գրավի, արգելանքի և կալանքի տակ չէ* ինչը հաստատվում է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի <<Շենգավիթ 2>> սպասարկման գրասենյակի կողմից տրված 20.02.2014թ. թիվ ՄՏ-20022014-01-0103 միասնական տեղեկանքով:

Օգտագործման նպատակը ՎԱՐՁԱԿԱՆ ՇԵՆՔ:

1.6. Վարձակալության հանձնված Գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք չէ սույն պայմանագիրը լուծելու կամ փոխելու համար:

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ՝ Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցված է ՀՀ 04.10.2005թ. թիվ 199-Ն օրենքի 23 հոդվածի պահանջների համաձայն, պայմանով՝ գույքի հետագա օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումը կկատարվի վճարման պահին գործող հողմասի կադ. արժեքի վճարման անդորրագիրը ներկայացվելու դեպքում: Գույքը գտնվում է 365,1քմ մակերեսով հողամասի վրա, որից 92,3քմ ծանրաբեռնված է մշտական սերվիտուտով: Հողամասը հատկացված է ՀՀ Կառավարության առընթեր Հարկային պետական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկ վարչական շենքի սպասարկման համար: 87,85 շինության 17,5քմ հանդիսանում է ընդհանուր օգտագործման տարածք : Սեփականատիրոջ բաժնեմասը 365,1քմ հողամասի նկատմամբ կազմում է 70/1651, իսկ 17,5քմ ընդհանուր օգտագործման տարածքինը՝ 18/1651:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Վարձատուն իրավունք ունի

2.1.1. Պահանջել վարձակալից Գույքն օգտագործելու սույն պայմանագրի պայմաններին և Գույքի նշանակությանը համապատասխան:

2.1.2. Վարձակալի կողմից վարձը վճարելու ժամկետների Էական խախտման դեպքում նրանից պահանջել վաղաժամկետ լուծելու պայմանագիրը:

2.1.3. Պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները, եթե վարձակալը Գույքից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանն անհամապատասխան:

2.2. Վարձատուն պարտավոր է

2.2.1. Գույքը վարձակալին հանձնել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխանող վիճակում.

2.2.2. Գույքը վարձակալին հանձնել դրա բոլոր պատկանելիքներով ու դրան վերաբերող փաստաթղթերով (տեխնիկական անձնագիր, որակի հավաստագիր և այլն).

2.2.3. Իր հաշվին կատարել Գույքի հիմնական վերանորոգումը:

2.2.4. Վարձակալին նախազգուշացնել Գույքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների (գրավի իրավունք, սերվիտուտ և այլն) մասին:

2.3. Վարձակալն իրավունք ունի՝

2.3.1.Պահանջել վարձատուից սույն պայմանագրի 5.1. կետում սահմանված ժամկետում իրեն տրամադրել Գույքը:

2.3.2.Վարձատուից պահանջել իրեն տրամադրել Գույքի պատկանելիքներն ու դրան վերաբերող փաստաթղթերը

2.3.3.Գույքի օգտագործմանն ամբողջովին կամ մասնակիորեն խոչընդոտող թերությունները հայտնաբերելիս, իր ընտրությամբ՝

23.3.1.Վարձատուից պահանջել անհատույց վերացնելու գույքի թերությունները կամ համաչափ իջեցնելու վարձավճարը, կամ հատուցելու Գույքի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը

2.3.3.2 Վարձատուին նախապես տեղեկացնելով վարձավճարից պահել տվյալ թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերի գումարը.

2.3.3.3 Պայմանների խախտման դեպքում վաղաժամկետ լուծելու պայմանագիրը:

2.3.4. Կատարել սույն պայմանագրով նախատեսված կամ անհետաձգելի անհրաժեշտությամբ ծագած հիմնական վերանորոգումը և ՎԱՐՁԱՏՈՒԻՑ պահանջել վերանորոգման արժեքը կամ դա հաշվարկել վարձավճարի հաշվին:

2.4. Վարձակալը պարտավոր է՝

2.4.1 Ժամանակին մուծել գույքն օգտագործելու համար նախատեսված վճարը (վարձավճարը) և տվյալ գույքի և նրա օգտագործման համար նախատեսված բոլոր անհրաժեշտ մուծումները:

2.4.2 Պայմանագիրը դադարելու դեպքում վարձատուին վերադարձնել Գույքն իր կողմից ստացված վիճակում՝ հաշվի առնելով դրա բնական մաշվածությունը:

2.4.3 Գույքը պահպանել պատշաճ վիճակում. իր հաշվին կատարել դրա ընթացիկ վերանորոգումը և կրել Գույքը պահպանելու համար անհրաժեշտ ծախսերը:

3.ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ

3.1 Վարձավճարի չափը կազմում է ամսեկան 170 000(հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր հարկերը:

Վարձակալը վարձավճարը կվճարի ամսեկան կտրվածքով մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-ը (տասնհինգը), իսկ դեկտեմբեր ամսվա հատկացվելիք գումարը վարձատուին կտրամադրվի մինչև դեկտեմբերի 25-ը (քսանհինգը) որպես կանխավճար, որի մարումը կիրականացվի հանձնման- ընդունման արձանագրության հիման վրա՝ կատարվող վճարումից նվազեցում կատարելու ձևով:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Եթե վարձակալը պայմանագիրը դադարելուց հետո չի վերադարձրել գույքը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ,ապա Վարձատուն իրավունք ունի վարձավճար պահանջել կետանցի ամբողջ ժամանակահատվածի համար: Եթե նման վճարը լիովին չի մարում Վարձատուին պատճառված վնասները, նա կարող է պահանջել հատուցելու դրանց մնացած մասը:

4.2 Վարձատուն պատասխանատվություն չի կրում Գույքի այն թերությունների համար, որոնք նա նշել է սույն պայմանագիրը կնքելիս, կամ որոնք նախապես հայտնի են եղել Վարձակալին կամ պետք է Վարձակալի կողմից հայտնաբերվեին Գույքը զննելիս կամ Գույքը վարձակալության հանձնելիս դրա սարքինությունն ստուգելիս:

4.3 Սույն պայմանագրով ստանձնած պարտաորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում վարձատուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի գնի նկատմամբ 0,5 տոկոսի չափով:

4.4 Սույն պայմանագրով նախատեսված տարածքի հանձնման ժամկետի խախտման համար վարձատուի, նկատմամբ յուրաքանչյուր ուշացած օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չկատարված մասի գումարի 0,05 տոկոսի չափով:
4.5 Սույն պայմանագրով նախատեսված՝ վարձատուի նկատմամբ հաշվարկված տույժերը, տուգանքները հաշվարկվում են և հաշվանցվում են վարձատուի վճարման ենթակա գումարից:
4.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
4.7 Տուգանքի և տույժի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:
4.8 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:
Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝
1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:
2) սույն պայմանագրով նախատեսված Ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:
Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:
Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
4.9 Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը՝ սույն պայմանագրի կողմերից որևէ մեկի առաջարկության առարկության դեպքում՝ պայմանով, որ վարձակալի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

5.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման, նոտարական վավարեցման , պետական գրանցման պահից և գործում է անորոշ ժամկետով:
Եթե տվյալ տարվա մինչև հունվարի 15-ը կողմերից որևէ մեկը մյուս կողմին գրավոր չի ծանուցում սույն պայմանագիրը լուծելու մասին, ապա այն համարվում է ևս մեկ տարով երկարաձգված:
5.2 Գույքի վարձակալության ժամկետն սկսվում է երկու հազար ՏԱՍՆՉՈՐՍ թվականի հունվարի մեկից :
5.3 Վարձատուն պարտավոր է անշարժ գույքը Վարձակալին հանձնել սույն պայմանագրի ժամկետը լրանալու օրվանից սկսած տասնօրյա ժամկետում հանձնման ընդունման ակտով:
5.4 Հաջորդ տարիների մասով պայմանագիրը ուժի մեջ կմտնի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, որի մասին կողմերի միջև կկնքվի լրացուցիչ համաձայնագրեր:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

6.1 Վարձատուի պահանջով վարձակալության պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծվել, եթե վարձակալը
6.1.1 Գույքն օգտագործել է սույն պայմանագրի պայմանների կամ գույքի նշանակության էական կամ բազմակի խախտումներով:
6.1.2 էականորեն վատթարացել է գույքի վիճակը.
6.1.3Սույն պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո երկու անգամից ավելի չի մուծել վարձավճարը և այլն
6.1.4 Խախտել է պայմանագրով նախատեսված որևէ կետի պահանջը:
6.2 Սույն պայմանագիրը կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի վաղաժամկետ դադարեցնել՝ լուծել պայմանագրի մյուս կողմին նախապես տաս օր առաջ գրավոր տեղյակ պահելով:

7. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է ՀՀ Համապատասխան դատարանի քննության:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈւԺԻ ԱԶԴԵՑՈւԹՅՈւՆԸ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունքը, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը ե այլն. որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3/երեք/ ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈւՅԹՆԵՐԸ

Սույն պայմանագրի կնքման հետ կապված ծախսերը վճարում է **«ՎԱՐՁԱԿԱԼԸ»**

9.1 Սույն պայմանագրով կատարված փոփոխությունները և լրացումները օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից: Սույն պայմանագրին կից հավելվածները դրա անբաժանելի մասն են:

9.2 Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, որոնցից մեկը պահվում է ՀՀ Երևան քաղաքի . Շենգավիթի տարածքի նոտարական գրասենյակի վարույթում, իսկ մնացած օրինակները տրվում են կողմերին անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանումում, սպասարկման գրասենյակում 30 **(երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում հաշվառման ենթարկելու համար** :

Պայմանագիրը ընթերցվեց կողմերի կողմից: Պայմանագրի բովանդակությունը բավարարում է կողմերի պահանջներին: Կողմերը հավաստիացնում են, որ պայմանագիրը մոլորության, խաբեության, կամ սպառնալիքի ազդեցության տակ չեն կնքում, և այն համապատասխանում է իրենց իրական մտադրություններին:

«ՎԱՐՁԱՏՈւ» ______________________________

«ՎԱՐՁԱԿԱԼ»<<ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ

լիազորված անձ՝ ______________________________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈւԹՅՈւՆ, ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ.
ԵՐԿՈւ ՀԱԶԱՐ ՏԱՍՆՉՈՐՍ ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ ՔՍԱՆՄԵԿԻՆ:

Սույն պայմանագիրը վավերացված է իմ Հայաստանի Հանրապետության «ՇԵՆԳԱՎԻԹ» նոտարական տարածքի նոտար՝ <u>ԱՆԱՀԻՏ ՄԻՆԱՍՅԱՆԻՍ</u> կողմից: Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրը ստորագրողների ինքնությունը ստուգված է, գործունակությունը՝ պարզված, ինչպես նաև իրավաբանական անձի՝ նրա ներկայացուցչի լիազորությունները, անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքները ստուգված են:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական Օրենսգրքի 611 (վեց հարյուր տասնմեկ) հոդվածին համաձայն սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանման սպասարկման գրասենյակում:

Գրանցված է սեղանամատյանում 1079

Գանձված է պետական տուրքը և ծառայության վճար, համաձայն Հայաստանի Հանրապետության «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին » օրենքների :

ՆՈՏԱՐ՝

Նոտարական ակտի կոդ: 444-20180214-117-2223217
Նոտարական ակտի գաղտնագիր: 8X9RL8

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 4
Անշարժ գույքի /վարչական շենքի/ վարձակալության պայմանագրում
փոփոխություն կատարելու մասին
Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան
Երկու հազար տասնութ թվականի մարտի յոթին

Մենք՝ Աննա Ստեփանի Մանուկյանը, /ծնված՝ 06 օգոստոսի 1968թվ, ID 006631030, տրված 11 դեկտեմբերի 2015թ 003-ի կողմից, հաշվառված քաղաք Երևան, Բագրատունյաց փողոց, 16 շենք, 73 բնակարան, այսուհետ՝ <<ՎԱՐՁԱՏՈՒ>> մի կողմից և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս աշխատակազմի ղեկավար Արտակ Սահակյանի, որի անունից համաձայն 26 փետրվարի 2018թվ տրված թիվ 1/18-1/9693-18 լիազորագրի հանդես է գալիս ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի գործերի կառավարման վարչության շինարարական ծրագրերի համակարգման բաժնի ճարտարագետ-շինարար Արթուր Լևոնի Եղիազարյանը /ծնված՝ 21 փետրվարի 1994թ, անձնագիր AK 0464068, տրված 15 մարտի 2010թ. 005-ի կողմից, հասցե՝ քաղաք Երևան, Նոր Նորքի 8-րդ զանգված, 22 շենք, 3 բնակարան, / այսուհետ՝ <<ՎԱՐՁԱԿԱԼ>>, մյուս կողմից, այսուհետև կողմեր, հիմք ընդունելով 21.02.2014թ./երկու հազար տասնչորս թվականի փետրվարի քսանմեկին/ կնքված և սեղանամատյանում թիվ 1079 համարով գրանցված անշարժ գույքի /վարչական շենքի/ վարձակալության պայմանագրի 5.4 կետը, կնքեցինք սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1 Համաձայնագրի առարկան
Հետագա համագործակցության նպատակով՝ կողմերը որոշեցին՝
1.1 Հաստատել 2018թ./երկու հազար տասնութ թվականի/ ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն հավելված 1-ի:
1.2 Սույն համաձայնագրով նախատեսված պայմանները տարածել կողմերի միջև 2018թ. հունվարի 1-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

2. Այլ պայմաններ
2.1 Պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:
2.2 Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, չորս հավասարազոր օրինակից: Համաձայնագրի մեկ օրինակը պահվում է նոտարի գործերում, իսկ մյուս օրինակները տրվում են կողմերին:
2.3 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
2.4 Սույն համաձայնագրի հավելված 1-ը հանդիսանում է համաձայնագրի անբաժանելի մասը:

<<ՎԱՐՁԱԿԱԼ>>
ՀՀ կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե
քաղաք Երևան, Մ. Խորենացի 3, 7 ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900011054013 Կենտրոնական գանձապետարան
Գործառնական վարչություն

<<ՎԱՐՁԱՏՈՒ>>
Աննա Ստեփանի Մանուկյան

<<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 163008348456

լիազորված անձ .....

.....

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ
ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՏԱՍՆՈՒԹ ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ ՅՈԹԻՆ
Սույն համաձայնագիրը վավերացված է իմ Հայաստանի Հանրապետության «ՇԵՆԳԱՎԻԹ» նոտարական տարածքի նոտար՝ ԱՆԱՀԻՏ ՄԻՆԱՍՅԱՆԻՍ կողմից: Կողմերը համաձայնագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Համաձայնագիրը ստորագրած անձանց ինքնությունը ստուգված է, նրանց գործունակությունը՝ պարզված, ինչպես նաև իրավաբանական անձի իրավունակությունը, նրա ներկայացուցչի լիազորությունները և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ստուգված են: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 301 հոդվածի համաձայն սույն համաձայնագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանումում,սպասարկման գրասենյակում:
Գրանցված է ներքնամատյանում 2055

Գանձված է նոտարական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ դրամ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Անահիտ Լազարի Մինասյան

Հավելված 1
21.02.2014թ. կնքված և սեղանամատյանում թիվ 1079 համարով գրանցված անշարժ գույքի վարձակալության պայմանագրում փոփոխություններ կատարելու նպատակով կնքված թիվ 4 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2018թ. պետական բյուջետային միջոցների հաշվին՝ ըստ ամիսների՝ ընդ. որում										
		մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1	ք.Երևան, Խորենացու 7ա շենքի թիվ 4 հասցեում գտնվող տարածքի վարձակալության ծառայություն	380 000	570 000	760 000	950 000	1 140 000	1 330 000	1 520 000	1 710 000	1 900 000	2 280 000	2 280 000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

«ՎԱՐՁԱԿԱԼ»

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ. Խորենացի 3, 7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900011054013
Կենտրոնական գանձապետարան
Գործառնական վարչություն
ի դեմս աշխատակազմի ղեկավար Արտակ Սահայանի լիազորված անձ Արթուր Եղիազարյան անձնագիր AK 0464068, տրված 15.03.2010թ. 005-ի կողմից

------------------------ **Ա.Եղիազարյան**
(ստորագրություն)

«ՎԱՐՁԱՏՈՒ»

քաղաքացի Աննա Ստեփանի Մանուկյան
ք. Երևան, Բագրատունյաց փողոց, շ. 16, բն. 73
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163008348456
ID 006631030, տրված 11.12.2015թ, 003-ի կողմից

------------------------ **Ա.Մանուկյան**
(ստորագրություն)

Նոտարական ակտի կոդ: 444-20170302-117-1020235
Նոտարական ակտի գաղտնագիր: RUQQYP

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3
Անշարժ գույքի /վարչական շենքի/ վարձակալության պայմանագրում
փոփոխություն կատարելու մասին

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան
Երկու հազար տասնյոթ թվականի մարտի տասնհինգին

Մենք՝ Աննա Ստեփանի Մանուկյանը, /ծնված՝ 06.08.1968թվ/հազար ինը հարյուր վաթսունութ թվականի օգոստոսի վեցին/ , ID 006631030, տրված 11.12.2015թ/երկու հազար տասնհինգ թվականի դեկտեմբերի տասնմեկին/ 003-ի կողմից, հաշվառված քաղաք Երևան, Բագրատունյաց փողոց, 16/տասնվեց/ շենք, 73/յոթանասուներեք/ բնակարան, այսուհետ՝ <<ՎԱՐՁԱՏՈՒ>> մի կողմից և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս աշխատակազմի ղեկավար Արտակ Սահակյանի, որի անունից լիազորագրով հանդես է գալիս ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի գործերի կառավարման վարչության շինարարական ծրագրերի համակարգման բաժնի ճարտարագետ-շինարար Արթուր Լևոնի Եղիազարյանը /ծնված՝ 21.02.1994թ/հազար ինը հարյուր իննսունչորս թվականի փետրվարի քսանմեկին/ , անձնագիր AK 0464068, տրված 15.03.2010թ./երկու հազար տասը թվականի մարտի տասնհինգին/ 005-ի կողմից, հասցե՝ քաղաք Երևան, Նոր Նորքի 8-րդ/ութերորդ/ զանգված, 22/քսաներկու/ շենք, 3/երեք/ բնակարան, / այսուհետ՝ <<ՎԱՐՁԱԿԱԼ>>, մյուս կողմից, այսուհետև կողմեր, հիմք ընդունելով 21.02.2014թ./երկու հազար տասնչորս թվականի փետրվարի քսանմեկին/ կնքված և սեղանամատյանում թիվ 1079 համարով գրանցված անշարժ գույքի /վարչական շենքի/ վարձակալության պայմանագրի 5.4 կետը, կնքեցինք սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1 Համաձայնագրի առարկան
Հետագա համագործակցության նպատակով ՝ կողմերը որոշեցին՝

1.1 Հաստատել 2017թ./երկու հազար տասնյոթ թվականի/ ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը ՝ համաձայն հավելված 1-ի:
1.2 Սույն համաձայնագրով նախատեսված պայմանները տարածել կողմերի միջև 2017թ. հունվարի 1-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:
1.3 Պայմանագրի 3.1 կետում նշված <<Վարձավճարի չափը կազմում է ամսեկան 170 000 (հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ>> բառերը փոխարինել << Վարձավճարի չափը կազմում է ամսեկան 190 000 (հարյուր ինսուն հազար) ՀՀ դրամ>> բառերով:

2. Այլ պայմաններ

2.1 Պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:
2.2 Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, չորս հավասարազոր օրինակից: Համաձայնագրի մեկ օրինակը պահվում է նոտարի գործերում, իսկ մյուս օրինակները տրվում են կողմերին:
2.3 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
2.4 Սույն համաձայնագրի հավելված 1-ը հանդիսանում է համաձայնագրի անբաժանելի մասը:

<<ՎԱՐՁԱԿԱԼ>>
ՀՀ կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե
քաղաք Երևան, Մ. Խորենացի 3, 7 ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900011054013 Կենտրոնական գանձապետարան

<<ՎԱՐՁԱՏՈՒ>>
Աննա Ստեփանի Մանուկյան

<<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 163008348456

լիազորված անձ .....

Արթուր Եղիազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ
ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՏԱՍՆՅՈԹ ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ ՏԱՍՆՀԻՆԳԻՆ
Սույն համաձայնագիրը վավերացված է իմ Հայաստանի Հանրապետության «ՇԵՆԳԱՎԻԹ» նոտարական տարածքի նոտար՝ ԱՆԱՀԻՏ ՄԻՆԱՍՅԱՆԻՍ կողմից: Կողմերը համաձայնագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Համաձայնագիրը ստորագրած անձանց ինքնությունը ստուգված է, նրանց գործունակությունը՝ պարզված, ինչպես նաև իրավաբանական անձի իրավունակությունը, նրա ներկայացուցչի լիազորությունները և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ստուգված են: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 301 հոդվածի համաձայն սույն համաձայնագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանումում,սպասարկման գրասենյակում:
Գրանցված է սեղանամատյանում 2321

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ դրամ համաձայն՝ «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Անահիտ Մինասյան

Հավելված 1
21.02.2014թ./երկու հազար տասնչորս թվականի փետրվարի քսանմեկին/ կնքված և սեղանամատյանում թիվ 1079 համարով գրանցված
անշարժ գույքի վարձակալության պայմանագրում փոփոխություններ
կատարելու նպատակով 15.03.2017թ/երկու հազար տասնյոթ
թվականի մարտի տասնհինգին կնքված թիվ 3 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N		Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2017թ. պետական բյուջետային միջոցների հաշվին՝ ըստ ամիսների՝ ընդ որում											
	Ծառայության անվանումը	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
	ք.Երևան, Խորենացու 7ա շենքի թիվ 4 հասցեում գտնվող տարածքի վարձակալության ծառայություն	190 000	380 000	570 000	760 000	950 000	1 140 000	1 330 000	1 520 000	1 710 000	1 900 000	2 280 000	2 280 000

* *Վճարմանենթակագումարներըներկայացվածենառողականկարգով:*

<<ՎԱՐՁԱԿԱԼ>>

ՀՀ կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ. Խորենացի 3, 7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900011054013
Կենտրոնական գանձապետարան
Գործառնական վարչություն
դեմս աշխատակազմի ղեկավար Արտակ
Մանվելյանի լիազորված անձ Արթուր Եղիազարյան
անձնագիր AK 0464068, տրված 15.03.2010թ 005-ի
կողմից

---------- Ա.Եղիազարյան

<<ՎԱՐՁԱՏՈՒ>>

քաղաքացի Աննա Ստեփանի Մանուկյան
ք. Երևան, Բագրատունյաց փողոց, շ. 16,
բն. 73
<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 163008348456
ID 006631030 003 11.12.2015թ

---------- Ա.Մանուկյան